ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 75-Ա

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2019 Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջների, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33- րդ հոդվածի դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի համայնքապետարանի 2019 թ. կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Ընդունել ի գիտություն, որ Համայնքային ծառայության պաշտոնների մասով կատարված լրացումները հաստատված են համարվում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո:
4. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ բյուջետային տարվա ընթացքում խիստ անհրաժեշտության և ֆինանսական հնարավորությունների դեպքում՝

ա) աշխատակազմը լրացուցիչ համալրել պայմանագրային մինչև 10 աշխատողներով:
բ) կատարելու հաստիքային միավորից պակաս սահմանված հաստիքի չափի ավելացում:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Սուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

Հավելված N 1

Ապարան համայնքի ավագանու
29.11.2018թ. N 75-Ա որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժին
2. Ֆինանսատնտեսագիտական բաժին
3. Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
4. Ներքին աուդիտի բաժին
5. Վարչական տարածքների համակարգման և գյուղատնտեսության բաժին
6. Կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, սոցիալական և երիտասարդության հարցերի բաժին

ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ապարանի տարածքային բաժին

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

Ցուցակ

Ապարան համայնքի վարչական տարածքները սպասարկող անասնաբույժների

N	Սպասարկվող համայնքներ	Սպասարկվող գլխաքանակ	Ընդամենը	Հաստիքային միավոր	Անասնաբույժ Ա / Ա
1	Ապարան	1559	1559	0,60	Շահբազյան Սարգիս
2	Լուսագյուղ	792	1737	0,60	Բոնդարենկո Հակոբ
3	Նիգավան	945			
4	Սարալանջ	172	1048	0,50	Կարապետյան Խաչիկ
5	Ձորագլուխ	564			
6	Թթուջուր	312			
7	Վարդենիս	594	594	0,25	Ներսիսյան Գագիկ
8	Կայք	295	869	0,35	Ասատրյան Հովսեփ
9	Չքնաղ	574			
10	Քուչակ	1476	1476	0,50	Հարությունյան Խաչատուր
11	Եղիպատրուշ	736	736	0,30	Բոյախչյան Համլետ
12	Արագած	1851	1851	0,75	Վարդանյան Աշոտ
13	Ծաղկաշեն	828	1501	0,55	Սարգսյան Հովհաննես
14	Արայի	673			
15	Վարդենուտ	1542	1542	0,55	Տերոյան Արտակ
16	Հարթավան	651	2211	0,75	Սահակյան Ատոմ
17	Շենավան	759			
18	Երնջատափ	399			
19	Ջրամբար	0			
20	Շողակն	402			
21	Ափնագյուղ	737	737	0,30	Կարապետյան Ֆրունզ
	Ընդամենը՝	15761	15761	6,0	

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 76-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ 2019 Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի պահանջների, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թ. կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Ապարան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակազմերի 2019 թ. թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն՝ N N 1,2,3,4,5,6,7,8,9,10,11 հավելվածների:
3. Հաստատել Ապարան համայնքի ՀՈԱԿ-երի ժամկետային պայմանագրային աշխատողների 2019թ. թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1/1, 7/1, 8/1 հավելվածների:
4. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ 2019 թ ընթացքում՝
ա/ անհրաժեշտության դեպքում կատարելու հաստիքների վերադասավորում ՀՈԱԿ-ների միջև :
բ/ խիստ անհրաժեշտության և ֆինանսական հնարավորությունների դեպքում՝ ՀՈԱԿ-ները լրացուցիչ համալրել պայմանագրային մինչև 15 աշխատողներով:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

Հավելված N 1
Ապարան համայնքի ավագանու
29.11.2018 թ N 76-Ա որոշման

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

N	ՀՈԱԿ – Ի ԱՆՎԱՆՈՒՄԸ
2	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի մշակույթի կենտրոն,, ՀՈԱԿ
	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Ապարանի մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ
3	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Զարզանդ Դարյանի անվան գրադարան,, ՀՈԱԿ
4	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Ապարանի արվեստի դպրոց,, ՀՈԱԿ
5	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Ապարանի մանկապարտեզ,, ՀՈԱԿ
6	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի կոմունալ ծառայություն,, ՀՈԱԿ
7	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Արագածի Գուսան Աշխույժի անվան արվեստի դպրոց,, ՀՈԱԿ
8	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Արագածի Լիա Տեր Ղևոնդյանի անվան մանկապարտեզ,, ՀՈԱԿ
9	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Արագածի կոմունալ ծառայություն,, ՀՈԱԿ
10	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Քուչակի Միհրդատ Ասատրյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց,, ՀՈԱԿ
11	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն,, ՀՈԱԿ
12	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա,, ՀՈԱԿ
13	ՀՀ Արագածոտնի մարզի ,,Ապարան համայնքի Քուչակի բժշկական ամբուլատորիա,, ՀՈԱԿ

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Հ/Հ	Վարչական տարածքի անվանումը	Հաստիքային միավոր	Աշխատավարձի ֆոնդ
	<ԱՐԱԳԱԾԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ> ՀՈԱԿ		
1	Արագած	2	255.000
2	Արայի		
3	Ափնագյուղ		
4	Վարդենուտ		
1	Շենավան	2	255.000
2	Երնջատափ		
3	Շողակն		
4	Հարթավան		
1	Քուչակ	2	255.000
2	Եղիպատրուշ		
3	Ջրամբար		
4	Ծաղկաշեն		
	<ԱՊԱՐԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ> ՀՈԱԿ		
1	Նիգավան	2	255.000
2	Լուսագյուղ		
3	Սարալանջ		
4	Կայք		
5	Վարդենիս		
6	Զքնաղ		
7	Ձորագլուխ		
8	Թթուջուր		

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Երեմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 77-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 Թ. ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի պահանջների, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի դրույթով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարան համայնքում տեղական տուրքերի 2019 թ. տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Ապարան համայնքում տեղական վճարների 2019 թ. տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն N N 2,3,4,5,6 հավելվածների:
3. Մշակույթի կենտրոնում և մարզադպրոցներում սահմանել անվճար ուսուցում:
4. Մշակույթի կենտրոնների և մարզադպրոցների դահլիճների օգտագործման վճարները մուծվում են տվյալ ՀՈԱԿ-ի արտաբյուջետային հաշիվներին՝ ՀՈԱԿ-երի կարիքների համար:
5. Համայնքի վարչական տարածքը բաժանել 3 գոտիների, հետևյալ սկզբունքով՝

ա) 1-ին գոտի՝ Ապարան քաղաք, Ապարանից Ափնագյուղ միջպետական ճանապարհի կողեզրերին տեղակայված սուբյեկտներ:

բ) 2-րդ գոտի՝ Քուչակ /բացի միջպետական ճանապարհի կողեզրերին տեղակայված սուբյեկտների/, Շենավան, Հարթավան, Ափնագյուղ գյուղերը:

գ) 3-րդ գոտի՝ Արագած, Եղիպատրուշ, Երնջատափ, Շողակն, Արայի, Վարդենուտ, Ծաղկաշեն, Նիգավան, Լուսագյուղ, Սարալանջ, Վարդենիս, Կայք, Չքնաղ, Թթուջուր, Ձորագլուխ, Ջրամբար գյուղերը:

6. Համայնքի ղեկավարին՝ ապահովել տեղական տուրքերի և վճարների 2019 թ. դրույքաչափերի հրապարակայնությունը և թափանցիկությունը:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 78-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ. ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38- րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ի գիտություն ընդունել Ապարան համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2018 թ. բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման մասին՝
   - սեփական եկամուտների մասով կատարվել է 56,8 %-ով
   - ծախսերի մասով կատարվել է՝ 66,3 %-ով
2. Համայնքի ղեկավար Կ. Եղիազարյանին՝
   ա/ հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկել տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների հավաքագրման աշխատանքներն ակտիվացնելու, բյուջեով նախատեսված բոլոր ցուցանիշների կատարումն ամբողջությամբ ապահովելու համար:
   բ/ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների ապահովման և համայնքի զարգացման ծրագրով նախատեսված խնդիրների կատարումն ապահովելու համար:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 79-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, <<Տեղական ինքնկառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն համարվող 15.5573հա հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Հաստատել օտարվող հողամասերի մեկնարկային գները և հավելաճի քայլերը՝ համաձայն աղյուսակ 1-ի:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 80-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի, <<Տեղական ինքնկառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ապարան համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողակտորները մրցութային կարգով վարձակալության տրամադրել:
2. Հաստատել վարձակալության տրամադրվող հողամասերի մեկնարկային գները և հավելաճի քայլերը՝ համաձայն աղյուսակ 2 -ի:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր մրցույթը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 81-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՓՆԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԻՐԻՆԱ ԳԱԼՈՒՍՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ափնագյուղ գյուղում գտնվող Իրինա Գալուստի Սահակյանին պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 02-023-0128-0004/ 0,5453հա գյուղատնտեսական նշանակության խոտհարքի նպատակային նշանակությունը փոխելուն և այն դարձնել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 82-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԵՎ ՉՔՆԱՂ ԳՅՈՒՂԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի.
Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Չքնաղ գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր՝ 02-088-0103-0039/ 0,135հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերի գործառնական նշանակության հողամասը փոխելուն և այն դարձնել ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:
1.1 Ընդունել ի գիտություն, որ առաջարկված հողակտորը մինչև քարտեզագրումը օգտագործվել է գյուղատնտեսական արտադրական օբյեկտների նշանակության:
2. Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենիս գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-101-0113-0001 կադաստրային ծածկագրից՝ 0,4հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերի գործառնական նշանակության հողամասը փոխելուն և այն դարձնել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 83-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ՀՈՂԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով համայնքի վարչական տարածքում բարեկարգման աշխատանքների կատարման, ինչպես նաև քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասերի արդյունավետությունը բարձրացնելու և բարելավելու նպատակով պահանջարկի առկայությունը, համաձայն ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի 1396-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ, 6-րդ կետերի և <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 13-րդ հոդվածի 2-րդ կետերի դրույթների.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ հեղեղումների հետևանքով առաջացած հողաթմբերը, որոնք չեն օգտագործվում ըստ նպատակային նշանակության՝ տեղափոխել և օգտագործել համայնքի վարչական տարածքում բարեկարգման աշխատանքների կատարման, ինչպես նաև հողամասերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
2. Տեղափոխվող հողի 1 մ^3 համար սահմանել վարձավճար՝ 200 (երկու հարյուր) դրամի չափով:
3.Ընդունել ի գիտություն, որ վարձավճարից ստացված միջոցները օգտագործվելու են նշված տարածքների ռեկուլտիվացման նպատակով:
4.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 Թ. N 84-Ա

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉՔՆԱՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2018թ. հոկտեմբերի 30-ին Ապարանի համայնքապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև կնքված ԱՄԱՀ-ՉՔՆԱՂ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով՝ Չքնաղ վարչական տարածքի ներհամայնքային խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքների կատարման պայմանագրի հավելված 2-ով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման հաջորդ օրվանից մինչև 30.11.2018թվականը:
Համաձայն պայմանագրի 7-րդ կետի պահանջի՝ «Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին»: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ եղանակային պայմանների վատթարացման պատճառով հնարավոր չէ աշատանքները իրականացնել շինարարական նորմերի պահպանմամբ, ինչի հետևանքով հնարավոր է կատարվի անորակ աշխատանք, Կապալառու կազմակերպությունը ներկայացրել է առաջարկություն՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետը երկարացնելու վերաբերյալ (ԳՐ-2018-76): Հաշվի առնելով նշված հանգամանքը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարանի համայնքապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև կնքված ԱՄԱՀ-ՉՔՆԱՂ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով պայմանագրում աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել մինչև բնակլիմայական պայմանների բարելավվումը:
2. Որոշման մասին ծանուցել Կապալառու-ին և կնքել համապատասխան համաձայնագիր:
3. Սույն որոշման պատասխանատվությունը դնել գնումների համակարգող՝ Մ.Ամիրյանի վրա:

Ավագանի՝ (կողմ - 8) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան